ՆՈՅԵՄԲԵՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության նոյեմբեր ամսվա անցուդարձի մասին:

ԱՄԵՆ ԻՆՉ ՋԱԶԻ ՄԱՍԻՆ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ում՝ «Իմ Քայլը» հիմնադրամի և Հայաստանի պետական ջազ նվագախմբի հետ համատեղ, տեղի ունեցավ հանդիպում-քննարկում ջազի, ջազի պատմության ու նշանակության երանգների և տեսակների մասին:
«Հայաստանի պետական ջազ նվագախմբի» տնօրեն Արտյոմ Նաղդյանի և «Իմ քայլը» հիմնադրամի մշակութային ծրագրերի համակարգող Լիլիթ Գրիգորյանի հետ ծավալվեց հետաքրքիր քննարկում, որի ընթացքում մասնակիցները իրենց հարցերի միջոցով իմացան մի շարք հետաքրքիր փաստեր ջազի վերաբերյալ:
Հանդիպման ավարտին ներկաներին սպասվում էր անակնկալ՝ «Jamiroquai in Armenia» և «The Parov Stelar Band at Silk Note Festival in Armenia» համերգների տոմսերի տեսքով:

NAIROBI SUMMIT IN ICPD25: ACCELERATING THE PROMISE

Նայրոբիում (Քենիա) մեկնարկել է «Nairobi Summit on ICPD25: Accelerating the Promise” գագաթաժողովը, որն այս տարի կազմակերպել են Քենիայի և Դանիայի կառավարություններնու ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը (UNFPA)՝ նպատակ ունենալով մոբիլիզացնել քաղաքական կամքն ու ֆինանսական ներդրումները՝ վերջնականապես ու լիարժեքորեն «Բնակչության և զարգացման միջազգային համաժողով»-ի ծրագիրն իրականացնելու համար:
Այս տարի լրանում է «Բնակչության և զարգացման միջազգային համաժողով»-ի (International Conference on Population and Development - ICPD) 25-ամյակը, որը տեղի է ունեցել Կահիրեում 1994թ-ին, որտեղ 179 երկրի կառավարությունները ընդունեցին «Գործողությունների ծրագիրը», որը միտված էր հզորացնելու կանանց ու աղջիկներին՝ հանուն իսկ իրենց և իրենց ընտանիքների ու համայնքի:
Հայկական պատվիրակությունն են ներկայացնում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը, ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Նարեկ Զեյնալյանը, ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր Լուսինե Բաղալյանը, ՀՀ օմբուդսմենի տեղակալ Արտյոմ Սեդրակյանը, Ռուզաննա Թորոսյանը «ՎԻՆՆԵԹ Հայաստանից», Կարինե Քոչարյանը ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամից և Մարիամ Ղարագյոզյանը Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոնից»:

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Ամանորյա հեքիաթն արդեն իսկ մեր գրասենյակում է
Մեր ներսում տոն, գրասենյակում տոն, որ մի տոնին դիմանանք
Հ Գ Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր հավատարիմ ու անփոխարինելի գործընկերոջը՝ Design Boutique ընկերությանը մեր գրասենյակը նրբաճաշակ ու գեղեցիկ զարդարելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

«Խաղաղ փոփոխություններինախաձեռնությունը» և «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ն համատեղ համագործակցությամբ «Հայաստանում երիտասարդության մասնակցությանխթանումըկառավարման և խաղաղության հարցերում» ծրագրի շրջանակներում, կազմակերպեց քառօրյա ճանաչողական այց Շոտլանդիայում երիտասարդական քաղաքականության վերաբերյալ:

Ուրախ ենք տեղեկացնելու, որ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնից» ճանաչողական այցին մասնակցում էր ԵՆԿ ՀԿ անդամ և երիտասարդական ոլորտի փորձագետ Աննա Եղոյանը

«ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ» ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Սպիտակում տեղի ունեցավ «Աղբի տեսակավորում» խորագիրը կրող ծրագրի ամփոփիչ միջոցառումը:

Այն մեկն էր «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման ծրագրի մասնակից 10 ծրագրերից, որոնցից 5-ը ֆինանսավորում ստացան «UPSHIFT Հայաստան» ծրագրից իսկ «Աղբի տեսակավորում» ծրագրի ֆինանսավորումը ստանձնեց Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ն:

Ծրագրի իրականացման ընթացքումմասնակից դեռահասները պատրաստել և քաղաքի անկյուններումև տարբեր կառույցների ներսումև տեղադրել են աղբի տեսակավորման թափոնամաններ, որոնցից 3-ը նախատեսված է պլաստիկ շշերի համար, իսկ 16-ը՝ թղթի:

Ամփոփիչ հանդիպման ընթացքումծրագրի մասնակիցները պատմեցին իրենց անցած ճանապարհի մասին ու կիսվեցին ձեռք բերած գիտելիքներով:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Սպիտակ քաղաքում աղբի տեսակավորման մշակույթի ձևավորմանը:

ՈՒՐԲԱԹՕՐՅԱ ՍՐՃԱՐԱՆ

«Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ի հերթական «Ուրբաթօրյա սրճարանը»
Այս անգամ մեր թեման շրջակա միջավայրն էր, քանի որ նոյեմբերի 29-ը «Կլիմայական գլոբալ պայքարի» օրն էր
«Ուրբաթօրյա սրճարանին» հատուկ ջերմ մթնոլորտում մասնակիցները տեղեկատվական թերթոնների միջոցով ծանոթացան, թե ինչ վնասներ է կրում բնությունն մեն օր, և թե ինչպես կարելի է պայքարել դրա դեմ, իսկ խաղերի միջոցով, արդեն գործնականում փորձեցինք «մաքրել» բնությունը♻
Հիանալի միջավայրը ուղեկցվում էր մեր միջազգային կամավորների կողմից պատրաստված համեղ բուսական նախուտեստներով

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-ՈՒՄ

Նոյեմբերի 1-ից 10-ը Վրաստանում տեղի ունեցավ «Երիտասարդների ձեռներեցության ուսուցումիյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում» խորագիրը կրող միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիրը:
Հայաստանից ծրագրին մասնակցում են «Շիրակի պետական համալսարանի Միքայել Նալբանդյանի անվան հինադրամ» քոլեջի ուսանողուհի Շուշանիկ Պետրոսյանը, «Շիրակի պետական համալսարանի» ուսանողներ Մարինե Նիկողոսյանը, Կատերինա Ադամյան, Հերմինե Կիրակոսյանը և Շարվիկ Պետրոսյանը, Հայբուսակ համալսարանի Շիրակացի մասնաճյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Տաթև Մալխասյանը, Երևանի Պետական համալսարանի ուսանողուհի Աննա Թադևոսյանը, Երևանի Թատրոնի և Կինոյի Պետական Ինստիտուտի ուսանող Աղաս Մովսիսյանը:

Ավստրիայում տեղի ունեցավ ուսումնականայց Էրազմուս+ ծրագրի շրջանակներում, որի հայկական պատվիրակության կազմում են ՀՀ ԱԺ պատգամավոր Արգիշտի Մեխակյանը, Շիրակի պետական համալսարանի պրոռեկտոր Նազելի Ավետիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գյումրու «Հայորդյաց տան» տնօրեն Աստղիկ Եդիգարյանը և Շիրակի մարզպետի օգնական Էմմա Բաղդասարյանը: Հայկական պատվիրակությունը ղեկավարում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոնի» նախագահ Արթուր Նաջարյանը:
Ծրագրի շրջանակներում հայկական պատվիրակությունը հանդիպում ունեցավ Լինցի քաղաքային իշխանություններկայացուցչների հետ:
Հանդիպման ընթացքում պատասխանատուների կողմից ներկայացվեց տեղական երիտասարդական քաղաքականության, պետություն+ուսումնական հաստատություն+ հասարակական կազմակերպություն համագործակցության մեխանիզմների և համատեղ ծրագրերի մասին մանրամասներ, քննարկվեց կրթության, երիտասարդության ոլորտներում հնարավոր ուղիները Ավստրիա-Հայաստան համագործակցության մասին:

Չեխիայում «Basic Youth Coaching» խորագրի ներքո մեկնարկեց Երիտասարդական աշխատողների և մարզիչների վերապատրաստման առաջին միջազգային դասընթացը:
Էրազմուս+ ծրագրի՝ երիտասարդության ոլորտում ռազմավարական համագործակցության շրջանակներում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ից «Մասնագիտական կողմնորոշումը՝ հանուն համայնքային երջանկության» (COACH) երկարաժամկետ համագործակցային ծրագրին մասնակցում են ԵՆԿ գրասենյակի պատասխանատու Սյուզաննա Սեկեպյանը, ԵՆԿ անդամներ Ռոզա Սիմոնյանն ու Մարիամ Դարբինյանը և ԵՆԿ կամավոր Լիլիթ Գաբրիելյանը:

Սլովակիայի Բարդեյով քաղաքում մեկնարկեց «Colours of Youth Work» խորագրով Էրազմուս+ միջազգային դասընթացը երիտասարդական աշխատանքի թեմայով: Հայաստանից ծրագրին մասնակցում են Եվրասիա համագործակցությունհիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի ծրագրերի օգնական Էմիլյա Ոսկանյանը և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ի կամավոր և Շիրակի պետական համալսարանի ուսանողուհի Աննա Տեփանոսյանը:

Ինչպես նաև այս ամսվա ընթացքումունեցել ենք մեկ ծրագրի հնարավորություն Էրազմուս+ ծրագրի շրջանակներում՝ «Do-It-Yourself» խորագրով միջազգային դասընթաց՝ ատելության խոսքին հակադիր և այլընտրանքային պատմությունների թեմայով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ

ԵՆԿ-ին միացավ ԵՀԿ ծրագրի կամավոր Հաննա Փինթսոնը

Հաննան Հայաստան է ժամանել Էստոնիայից և յոթ ամիս շարունակ Եվրոպական կամավորական աշխատանք է իրականացնելու Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություններիկենտրոն» ՀԿ-ում:

Բարի գալուստ մեր մեծ ու ջերմ ընտանիք!!!

ՆՈՅԵՄԲԵՐԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆԸ»

«Երիտասարդների տանը» յուրաքանչյուր ամիս լի է բազմաբովանդակ, հետաքրքիր, կրթական ու ժամանցային իրադարձություններով

Նոյեմբերի 2-ին կենտրոնի պատանիներն ու աշխատակիցները քայլարշավ իրականացրեցին դեպի Մայիսյան, Հացիկ և Ծակ քար **ուղղություններով:**

Նոյեմբերի 9-ին «Արևիկ» հրատարակչությունը Ամերիկյան դեսպանատան հովանավորությամբ իրականացրեց դասընթաց բուլինգի վերաբերյալ: Դասընթացի ընթացքումներկայացվեց նաև ամերիկացի գրող Ջաքլին Վուդսոնի «Ամեն բարություն» գիրքը, որը տեղ գտավ ոչ միայն կենտրոնի պատանեկան գրադարանում, այլև գրքից նվիրվեց մասնակից բոլոր երիտասարդներին:

- ***https://www.facebook.com/youthhousegyumri/photos/ms.c.eJw9zMsNwDAIA9CNKsBgw~;6LVU3SHJ~;8kTUnjMMKWD767K2YLpauCe8ZOxYlH7t95dqD2xG5~_oVj23~;Qb65c~;gKI6Bod.bps.a.589716214883224/708692069652304/?type=3&theater***
- ***https://www.facebook.com/youthhousegyumri/videos/514808082583565/?epa=SEARCH_BOX***

Այս ամիս մեր հետաքրքիր, բովանդակալից և ուսուցողական ակումբների շարքը համալրվեց ևս երկուսով՝ բանավեճի և յոգայի ակումբներով:

- ***https://www.facebook.com/youthhousegyumri/photos/a.554405468414299/707832726404905/?type=3&theater***
- ***https://www.facebook.com/youthhousegyumri/photos/a.554405468414299/716952102159634/?type=3&theater***

Նոյեմբերի 13-ին «Երիտասարդների տան» սաները ճանաչողական այցով եղան Գյումրուիսցանների թանգարանումև Անի ֆոտոսերվիսում, որտեղ երիտասարդները հնարավորությունունեցան սովորելու և անձամբ փորձարկելու՝ ինչպես կարելի է պլաստմասե շշերից ստանալ թելեր:
https://www.facebook.com/youthhousegyumri/photos/ms.c.eJw9jskNBEEMAjNaGd~;OP7FV~_5hniQIRIFOS5CRK8I80Kw3rMByPPWU5stRDhNcPfXkELWe9XBnrIx2iZLWc7bvT5dz924Nz~_7Ddq9m382UYX1~;a9~;trw3wsGP~;~_S~;T~;kNu39pP~;yNU2Ig~-~~.bps.a.555500291638150/710540382800806/?type=3&theater
Կենտրոնում ևս մեկ կամավոր ավարտեց իր աշխատանքը: Իրականացվեց կամավորական աշխատանքի ամփոփում և հավաստագրի հանձնումԱրևիկ Թադևոսյանին, ով մայիսից մինչև հոկտեմբեր ամիսները կամավորական հիմունքներով աշխատել էր կենտրոնում՝ որպես ընդունարանի աշխատակից:
https://www.facebook.com/youthhousegyumri/photos/ms.c.eJw1yskNADAIA7CNqnAEyP6L9VH6tOQ2WpLD6ijT6bWAEv1bHgkfrqvfxwWbnQzU.bps.a.535420640312782/715145585673619/?type=3&theater
Երեխաների համաշխարհային օրվան նվիրված գագաթնաժողովին մասնակցեցին նաև «Երիտասարդների տան» սաները, ովքեր «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակներումներկայացրել էին «Համայնքը մեր ձեռքերով» գաղափարը և կենտրոնի բակում պատրաստել աշխատանքային տարածք:

- https://www.facebook.com/youthhousegyumri/photos/ms.c.eJw9zUEOAEEERNEbTRpTivtfrBOa5csPRYH5gcOhovKxrChDn6Xta1WTCBsnIgO~;YLp1338sC8fR9mew98~_6~;sGeWXvk7BFlz3Xdn~_nRHXkBqqQtDQ~-~~-.bps.a.590308071490705/715360565652121/?type=3&theater

2019թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Վանաձորում տեղի ունեցած ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» ամենամյա ծրագիրի շրջանակներում «Երիտասարդների տան» համակարգող Գայանե Առաքելյանը և նույն կենտրոնի երիտասարդական աշխատող Անժելա Ջանոյանը խոսեցին «Բաց երիտասարդական աշխատանքը Հայաստանում» թեմայի և Գյումրու «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի մասին՝ որպես ՀՀ-ում գործող առաջին և այս պահին միակ բաց երիտասարդական կենտրոն:

- https://www.facebook.com/youthhousegyumri/photos/ms.c.eJw1ysEJACAMA8CNJI3GtPsvJIR9Hpxjo0hIBZkabi~_0jWdKcpb47fvnAZokDNQ~-.bps.a.561547021033477/716092258912285/?type=3&theater

Նոյեմբերի 22-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում կայացավ տեղական և միջազգային համագործակցության զարգացմանն ուղղված համաժողով, որի ընթացքում Գյումրու «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող Գայանե Առաքելյանը խոսեց «Բաց երիտասարդական աշխատանքը Հայաստանում» թեմայի և Գյումրու «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի մասին:

- https://www.facebook.com/youthhousegyumri/photos/ms.c.eJw9y8ENwDAIQ9GNKgwG0~;0XqxqSHJ~;8LQgKD0coHY~;GNuZxdBvRGjOQIlm17fx7um1br73eY6y~;bUf16nX~_mD5vn9PnBwdRICo~-.bps.a.715933998928111/717173232137521/?type=3&theater

Այս ամիսը եզրափակեցինք կարևոր և հետաքրքիր հանդիպումով: Պատանիները հանդիպում ունեցան ազգային ժողովի պատգամավոր, ԵՆԿ ՀԿ տեղական խորհրդատվական խորհրդի անդամ Նազելի Բաղդասարյանի հետ, ով խոսեց իր բազմամասնագիտական ուղուց և հասարակության մեջ երիտասարդների դերակատարության կարևորությանմասին:
https://www.facebook.com/youthhousegyumri/photos/ms.c.eJw9y8ENADEIA8GOTgQcDP03Fh2EPC3PUhc2JLZA6fmxNj2MLoa7HYuSFnI32ut4I~;6ft~_rB8Sxvr2f5nD~_739Mzf~_8ZBxKxIEI~-.bps.a.693718837816294/721454085042769/?type=3&theater